

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Արցախի Հանրապետության (ԱՀ) նախագահի ընտրությունների երկրորդ փուլի (2020 թվականի ապրիլի 14-ի) նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	Իրավական հիմքը (ԱՀ ընտրական օրենսգրքի հոդված)	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին	12, մաս 2	11.04.2020	Ոստիկանություն
2	Թեկնածուների անունների հերթականությունը քվեաթերթիկում որոշելու և նշելու համար վիճակահանության անցկացում	91, մաս 1	07.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
3	Ընտրողների ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ համացանցում՝ www.police.nkr.am հասցեով տեղադրում	13, մաս 2	12.04.2020	Ոստիկանություն
4	Թեկնածուներին Արցախի հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգի և ժամանակացույցի սահմանում	20, մաս 2 90, մաս 5	08.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
5	ԱՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թվի հրապարակում	8, մաս 7	13.04.2020	Ոստիկանություն
6	Հանրապետության նախագահի ընտրությունների 2-րդ փուլի նախընտրական քարոզչության սկիզբ	20, մաս 2	09.04.2020	Նախընտրական քարոզչություն իրականացնողներ
7	Իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրի ներկայացում Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն	28, մաս 1	18.04.2020	Թեկնածուներ
8	Թեկնածուների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացության կազմում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացում	29, մաս 5	մինչև 25.04.2020	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
9	Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի տեղադրում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում	28, մաս 4	մինչև 21.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

10	Քվեաթերթիկների նմուշների սահմանում	51, մաս 2 կետ 5 91	07.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
11	Քվեաթերթիկների տպագրություն	59, մաս 6	մինչև 11.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
12	Քվեարկության օրն ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակի կազմում	10, մաս 7	մինչև 10.04.2020-ի ժամը 14:00-ն	Ոստիկանություն
13	Քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողների ցուցակի Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացում	10, մաս 13	մինչև 11.04.2020	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար՝ տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի մասնակցությամբ
14	Ստացիոնար բուժման մեջ գտնվող և քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող, ստացիոնար բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրողների ցուցակի ներկայացում լիազոր մարմին	10, մաս 8	մինչև 11.04.2020-ի ժամը 14:00-ն	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար
15	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքների հանձնում տարածքային ընտրական հանձնաժողովին՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով	60, մաս 3	մինչև 11.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
16	Ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ծանուցագրերի ուղարկում	13, մաս 6	մինչև 11.04.2020	Ոստիկանություն
17	Տեղամասային կենտրոնում փակցվող և տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով (այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների լրացուցիչ ցուցակը)՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերի տրամադրում տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին	12, մաս 3	12.04.2020	Ոստիկանություն
18	Ջորամասում հաշվառված ընտրողների ցուցակների տրամադրում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին	12, մաս 4	11.04.2020	Ջորամասի հրամանատար

19	Քրեակատարողական հիմնարկում քվեարկող ընտրողների ցուցակի հանձնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին	12, մաս 5	12.04.2020	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
20	ԱՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում ընտրողների ցուցակների կազմում	9, մաս 3	07.04.2020- 14.04.2020-ի ժամը 20:00-ն	ԱՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն
21	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց լրացուցիչ ցուցակի օրինակի՝ տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցում	13, մաս 4	12.04.2020	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
22	Քվեարկության սենյակի կահավորման ավարտ	57, մաս 3	մինչև 13.04.2020-ի ժամը 24:00-ն	Համայնքի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով
23	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկների, հանձնաժողովի կնիքի հանձնում	59, մաս 7 60, մաս 4	13.04.2020	Տարածքային ընտրական հանձնաժողով
24	Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում իրեն ընդգրկելու մասին դիմումի ներկայացում լիազոր մարմին	14, մաս 2	09.04.2020- 14.04.2020-ի ժամը 20:00-ն	Ընտրողներ, ոստիկանություն
25	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունների դադարեցում	27, մաս 7	14.04.2020-ից	ԱՀ տարածքում գործող առևտրային բանկեր
26	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի սկիզբ	64, մաս 1	14.04.2020 ժամը 07:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
27	Քվեարկության սկիզբ	56, մաս 1 65, մաս 1	14.04.2020 ժամը 08:00-ից	Տեղամասային ընտրական հանձնաժողով
28	Ընտրությունների ընթացքի մասին տեղեկությունների հրապարակում ժամը 12:00-ից սկսած՝ մինչև ժամը 21:00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ տեղեկությունների հրապարակում	8, մաս 9	14.04.2020-ի ժամը 09:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 18:00- ին և 21:00-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

29	Մտացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների համար քվեարկության կազմակերպում	56, մաս 2	14.04.2020-ի ժամը 08:00-ից մինչև ժամը 18:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
30	Քվեարկության ավարտ	56, մաս 1 69, մաս 1	14.04.2020-ի ժամը 20:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
31	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմում և հրապարակում	72, մաս 5	մինչև 15.04.2020-ի ժամը 06:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով
32	Ընդհանուր փաթեթի (այդ թվում՝ ընտրողների ցուցակները պարունակող փոքր պարկի), քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակի, գրանցամատյանի և հանձնաժողովի կնիքի տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացում	72, մաս 9	մինչև 15.04.2020-ի ժամը 08:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
33	Ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորում	74, մաս 2	մինչև 15.04.2020-ի ժամը 14:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
34	Քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորման ավարտ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ներբեռնելու հնարավորությամբ տեղադրում	8, մաս 10	մինչև 15.04.2020-ի ժամը 20:00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
35	Ընտրությունների քվեարկության նախնական արդյունքների ամփոփում, արձանագրությամբ վավերացում, Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում	76, մաս 1	մինչև 15.04.2020-ի ժամը 20:00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
36	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակի ներկայացում Կենտրոնական ընտրական հանձնաժողով	74, մաս 3	մինչև 15.04.2020-ի ժամը 20:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
37	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու հնարավորություն (հրավունք)	50, մաս 1	1) 15.04.2020 -ի ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն 2) 16.04.2020-ի ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն	Հանրապետության նախագահի թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ

38	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու հնարավորություն (իրավունք)	48, մաս 12, 14	1) 15.04.2020 -ի ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն 2) 16.04.2020-ի ժամը 09:00-ից մինչև ժամը 11:00-ն	Հանրապետության նախագահի թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
39	Քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների սկանավորում	74, մաս 4	15.04.2020 -ի ժամը 12:00-ից մինչև 16.04.2020-ի ժամը 12:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով
40	Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումի ներկայացում Կենտրոնական ընտրական հանձնաժողով	48, մաս 13, 15	մինչև 19.04.2020-ի ժամը 18:00-ն	Նախագահի թեկնածու
41	Քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմում	76, մաս 2	1) մինչև 17.04.2020-ի ժամը 20:00-ն կամ 2) 21.04.2020-ին՝ քվեարկության արդյունքների հետ կապված բողոք լինելու դեպքում	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
42	Ընտրության արդյունքներն ամփոփում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշման ընդունում	76, մաս 6	21.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
43	Քվեարկության արդյունքների վերջնական աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի, տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ընտրական տարածքների և ներբեռնելու հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրում	8, մաս 10	21.04.2020	Կենտրոնական ընտրական հանձնաժողով